

ւահանգիստը պետութեան մեծագոյն ու ապահովագոյն նաւահանգիստն է : Ովկիանոսի կողմէն քանի մը մարտկոց ներ ունի պաշտպանութեան համար :

Էռն Ռֆրիկեցին Գարդուէսէմ կը կոչէ զայն . իսկ Շկատիր կամ Շկատըր անունը տեղացիք տուած են անոր , որ կը նշանակէ ամրոց : Ակզբան պզտի աննըշան դղեակ մըն էր . Շարդոգալի թափաւոր մը տեսնելով որ աղէկ գիրքի վըրայ է , բերդաքաղաք մը շինեց զայն . բայց հանդերձ այսու չկրցան Շարդոգալք պաշտպանել զայն Ռհմէտ շերի Փին յարձակմունքէն :

Մտեն մը Շկատիր վաճառականութեամբ խիստ կենդանացած էր . բայց հիմա շատ ինկած է , և թէ վաճառականական ու թէ քաղաքական կողմանէ յարդ մը չունի : Հազիւ օ կամ 600 բնակիչ կայ մէջը :

### Վեսովի արդի վիճակը :

1858 տարւոյն պատառմունքէն՝ ի վեր մինչեւ ցայսօր միշտ լաւա կը վազէ Ա եսուվ լեռնէն , և այսպիսի երեսութենէր կը տեսնուին՝ որ Շարդիչի բնակչաց սիրտը շատ կը գողացընէն : Շարտաքց կարգի բան մըն է ժայթքման մը ասանկ տասնըութ ամսէ աւելի տեւելը , և քան զայն աւելի նորութիւնն այն է՝ որ գետնին տակէն է պատառմունքը : Ա եսուվի տարեգրութեանց մէջ , որ Վրիստոսի 79 թուականէն կը սկսին , յորումանհետացան Պոմպէյա և Ներկուլանոն քաղաքները , ոչ երբէք ասոր նման պատառմունք մը կը հանդիպի մարդ : Շմենէն աւելի աշաւոր պատառմունքներն երբէք են . մէյ մը 1631 տարւոյն , որ տասնըութեց ժամուան չափ սպառնացաւ գետինն անցընել՝ Խեապոլիս քաղաքը զարհութելի երկրաշարժիւ մը . երկրորդը՝ 1737 տարւոյն , որ լաւայիր Ահզինա քաղքին մեծ մասը կործանեց , և երրորդը՝ 1794ին , որուն լաւան վեց ժամուան մէջ 2 մղոն տեղ քալեց : Բայց հիմակուան պատառմունքէն

վազած լաւան զրեթէ 3 մղոն տեղ ձամբայ ըրաւ , թէպէտ աւելի զանդաղութեամբ քալելով :

Ինչպէս գիտեն ամէնքը՝ Ա եսուվի նոր բերանը սաստիկ երկրաշարժէ մը բացուեցաւ , որ հրաբխին մեծ կոնսնը պատռեց : Բայց դիտելոց Պ . Շալմիկի գիտնոյն , որ Ա եսուվեան դիտանոցին տեսուչն է , լաւան կոնսնին վարէն հողուն տակէն դուրս ելաւ բնանոյ պէլլէ Ճիւերէ ըսուած տեղը , զրեթէ 300 մէջը հեռու Լուսապատականին Տնէն . բոլոր այն գաշտին մէջ տարածուելէն ետքը՝ գնաց ինկաւ ընդարձակ խոր հեղեղատի մը մէջ , որ 80 մէջը խորութիւն ունէր , և աւելի քան զ300 մէջը լայնութիւն , և որ հիմա բոլորովին լեցուած է . ետքը իրեք տեղ կառքի փառաւոր ձամբան աւրելով , քսանի մը չափ գեղացւոյ տներ ու ամարտասուն ապարաններ ծածկեց , այգիներով ու ձիթենիներով զարդարուած խել մը երկիր աւրըշտրկեց , և Արտոյ տէլլէ Կոռալքա ըսուած լաւայի հեղեղն ալ անցաւ , որ Շարդիչի գերեզմանատանն ուղղութեամբ կ'ընթանայքանի մը հարիւր մէջը հեռաւորութեամբ անկէ :

Ո՞երձաւ որ հաշուով կը զուրցուի թէ հրաբխին այս նոր բերանը՝ քսանուերկու միլիոն խորանարդ մէջը աւելի լաւա դուրս տուեր է : Խըբեմն բնութիւնն ալ արտաքոյ կարգի գործողութիւններ կ'ընէ . ինչպէս այս լաւան տան մը խնայելով՝ չէ կործանած զայն , այլ չորս կողմը պատեր է ինչուան ծածքը . բայց ոչ ոք կրնայ ոտք կախել հոն :

Դիտանոցին տեսչին ըրած փորձերը կը հաստատեն որ լաւային ջերմութիւնը զրեթէ 1,000 աստիճանի հասեր է Ահզօմիւրի ջերմացափով :

Ո՞օտերս ստէպ ստէպ գետնաշարժներ կը հանդիպին հոնտեղերը , որ բաւական կը ցնցեն , և վախ կու տան ուրիշ նոր պատառման մըն ալ :

